

նազան դպրոցներ, որոնցմէ է անշուշտ Գարեգին Կթղ-ի յիշած Վանկոյի վանքի հայ գրչութեան դպրոցն ալ:

ՎԵՐԱԳԱՐՁ ԴԵՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Սամոսատի մէջ լրացնելէ ետք իր դործը, Մաշտոց հրաժեշտ առնելով քաղաքին եպիսկոպոսէն, իր բոլոր աշակերտներով կը վերադառնայ նախ Եղեսիա եւ ապա Ամիդ: Եւ երկու քաղաքներու եպիսկոպոսներուն կը ներկայանայ թէ՛ ցոյց տալու համար եղած աշխատանքներուն արդիւնքը եւ թէ՛ հրաժեշտ առնելու անոնցմէ: Ամասեան կը համարի թէ երկու եպիսկոպոսներն ալ Եղեսիա կը գտնուէին այդ պահուն: Ընդէն է որ Կորինի ըսածներէն այդպէս կարելի է տպաւորուիլ: «Որ յորոց նախընկալն եղեւ առաջի արկեալ նոցա զնշանադիրս աստուածատուրըս. վասն որոյ բազում իսկ զոմութիւնք յեպիսկոպոսաց սրբոց եւ յամենայն եկեղեցեաց բարձրանային»¹¹³: Այս տողերու մէջ կը նշմարուի Կորինի աճապարանքը մէկ անգամէն ըսելու ինչ որ երկու տարբեր քաղաքներու մէջ պատահած էր: Ուստի պէտք է ենթադրել որ Մաշտոց Եղեսիայէն անցնելով կը մտնէ Ամիդ, եւ ան-

կէ կը բռնէ վերադարձի ճամբան, անշուշտ նոյն ճամբով որ եկած էր. «Զօթեւանօք անցեալ յաջողութեամբ եւ հոգելից ուրախութեամբ»: Մանանդեանի աշխատութեամբ՝ Արտաշատէն Տիգրանակերտ երկարող ստուգուած օթեւաններն են. Արտաշատ - Բագուան - Դիդեմ - (Indua?) - Հարք - Եղեղական - Դոնեկիանք - (Molchia?) - Բաստափան - Պատրանսաւան - Արզն - Զիւնկերտ - Տիգրանակերտ¹¹⁴: Այս բոլոր օթեւանները իրարմէ շուրջ 30 հզրմդր. հեռաւորութեան վրայ՝ մէկ մէկ օրուայ միջոցին կտրելով, Մաշտոց շուրջ 15 օրէն հասած պիտի ըլլայ Այրարատեան դաւառը, Վոսաճապուհի վեցերորդ տարին, զրեթէ տարի մը բացակայութենէ վերջ: Բնականաբար Մաշտոցի ժամանումի լուրը մեծ խանդավառութիւն կը ստեղծէ մայրաքաղաքին մէջ, եւ թագաւոր ու կաթողիկոս, իշխաններու հետ ընդ առաջ ելած մինչեւ Երասխ գետին փերը, ուր կար Տափեր նշանաւոր կամուրջը, յաղթական կերպով կ'ընդունին Գրոց զիւտի մեծ հեղինակը եւ չքեղ թափօրով կը մտնեն քաղաք:

(Շար. 2)

Հ. ՊՕՂՈՍ ԱՆԱՆԵԱՆ

113. ԿՈՐԻՆԻ, վարք Մաշտոցի, էջ 50:

114. ՄԱՆԱՆԴԵԱՆ Յ., Հիմն Հայաստանի ճանապարհները, Երեւան, 1936, էջ 85-114:

ՃՇՏՈՒՄՆԵՐ ԾՈՓՔԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՆ

ԵՒ

ԲՆԱԲԵՂ ԲԵՐԴԻ ՏԵՂԻՈՅՆ

Ծոփք կամ Ծոփաց աշխարհը, որ Հայաստանի հարաւ արեւմտեան նահանգնեւէն մէկն էր, 15-890 քառակուսի հզրմդր. տարածութեամբ, հին տառնէ ի վեր բաժնուած էր ութը գաւառներու, զորս կը յիշէ Սորենացիի աշխարհագրութեան կաղմովը. Սորձեան, Հաշտեանք, Պաղնատուն, Բալասովիտ, Ծոփք, Անձիթ, Դէղիկ եւ Գաւրէկ:

Ծոփք անունը, Բելք կը համարի որ նախաուրարական է, եւ Բալուի ուրարտական արձանագրութիւններուն մէջ յիշուած ՍՈՒՊԱՆԻ = SUPANI է, եւ որ կը համապատասխանէ հին Ծոփաց աշխարհին: Յոյն եւ լատին պատմիչները եւս կը յիշեն Ծոփքը եւ ՍՈՅ կամ ՍՈՅԷՆԷ կը կոչեն Տօփ, Տօփչիյ = լատ. Sophane, Sophanene:

Այս ընդարձակ աշխարհին սահմանները ճշտելու համար՝ տեսնենք թէ օտար եւ հայ պատմագիրները եւ աշխարհագիրները ի՞նչ կ'ըսեն:

1. Օտար աշխարհագիրներ. Առաջին օտար աշխարհագիրը որ կը յիշէ Ծոփքը, Ստրաբոնն է, ծնած Ամասիա Ն. Ք. 58ի ժամանակները, եւ ապրած մինչեւ 25 թուականը Յ. Ք.: Ստրաբոն զրած է թուականը Յ. Ք.: Ստրաբոն աշխարհագրութիւն մը, համբաւուող աշխարհագրութիւն մը, որ կը յիշէ մեր Ծոփքը եւ զայն Տօփչիյ կ'անուանէ. եւ որ բոտ իրեն, կը գտնուէր Եփրատի ձախ ափին վրայ, Մալաթիոյ եւ Կոմմաղենէի դիմաց, եւ իր սահմանները կը հասնէին մինչեւ Տաւրոսի կամ Մասիսի լեռներուն ստորոտը. երկիր մը որ տարածուէր Տաւրոսի եւ Անտիտաւրոսի լեռներուն միջեւ: Այս երկիրը իր ժա-

մանակ Զարիադրիսի թագաւորութեան մաս կը կազմէր, եւ որուն մայրաքաղաքն էր, ըստ Պլինիոսի՝ Կարկաթիոկերտա = Καρχαδιόχερτα, որ Եփրատի մօտ կը գտնուէր:

Ասկէ կը տեսնենք, կ'ըսէ Հիւրչման, որ Ծոփք երկիրը ղէպի արեւմուտք կը հասնէր մինչեւ Եփրատ գետը, իսկ ղէպի հարաւ արեւելք՝ կը հասնէր մինչեւ Տաւրոսի կամ Մասիսի լեռներուն ստորոտը: Սոյն հմուտ հեղինակը կ'աւելցնէ, թէ այս Ծոփքի սահմաններուն տեղագրութիւնը, մանաւանդ ղէպի հարաւ արեւմուտքի սահմանը, շատ անորոշ է. այնպէս որ թէ Ծոփքի հարաւ արեւմտեան սահմանը մինչեւ ո՛ւր կը հասնէր՝ չենք գիտեր:

Պլուտարքոս յոյն պատմիչը, ապրած Ն. Ք. 45 թուականին, կը զրէ Ծոփաց աշխարհի մասին, եւ կ'ըսէ թէ անոր հարաւ արեւմտեան սահմանը կը հասնէր մինչեւ Տիգրիս գետը, ինչ որ ըստ Հիւրչմանի, պէտք ենք հասկնալ Շահունեաց Ծոփքի մասին. կարծիք մը զոր մենք կատարելով կը գտնենք:

Արիանոս, Բ. դարուն պատմիչ, նոյնպէս կը յիշէ Ծոփքը եւ Տօփչիյ կը կոչէ:

Ըստ Եւտրոպիոսի՝ Մեծն Տիգրան ստիպուեցաւ Ասորիքը, Փիւնիկէն եւ ՍՈՅԱՆԷՆ, որ է Ծոփքը, Պոմպէոսի թողուլ. այն երկիրը որ Տիգրան Բ. առած էր Արտանէս Ծոփացիէն²:

1. ՀԻՒՐՇՄԱՆ, Հիմն Հայոց տեղւոյ անունները, տպ. Վիեննա, 1907, էջ 143:

2. ԱՌԳ. էջ 145:

Պրոկոպիոս եւս կը յիշէ Ծովքը Տափառնի
եւ իրրեւ գաւառ կը նկատէ, եւ որուն մէջ
էր Մարտիրոսաց քաղաքը. αὕτη δὲ καίται
μὲν ἐν τῇ Σωφαναγνῇ καλοῦμένη γῶρᾳ =
urbs haec in Sophanene sita³: Նոյն բանը
կը կրկնէ Շինութեան գրքին մէջ, «Est
in Armenia quam Sophanenen vocant,
urbs Martyropolis⁴: Պրոկոպիոս թէեւ ու-
րոշակի Ծովքի սահմաններուն մասին չի
խօսիր, սակայն երբ կը շեշտէ Մարտի-
րոսաց քաղաքին Ծովքի մէջ ըլլալը, նը-
շան է թէ Ծովք ըսելով՝ կը հասկնար Տի-
գրիսի աւազանը, ուր էր նշանաւոր Մար-
տիրոսաց քաղաքը: Այսպէս, ուրեմն, օ-
տար աշխարհագիրները եւ պատմիչները
Ծովքաց աշխարհին Տիգրիսէն անդին եր-
կարելուն մասին ակնարկ չունին:

2. Հայ աշխարհագիրներ. Մեր պատ-
մագիրներէն գլխաւորապէս Ծովքաց աշ-
խարհի մասին գրողներն եղած են Բիւ-
զանդ եւ Խորենացին:

Բիւզանդ երկու Ծովքեր կը դանադանէ.
Մեծ Ծովք եւ Ծովք Ծահունեաց. ու
թէեւ որոշ Ծովքաց աշխարհի սահմաննե-
րուն մասին չի խօսիր, սակայն կը յիշէ
Ծովքաց աշխարհի հայ նախարարութիւն-
ները, իշխանները, կամ ինչպէս կ'ըսեն
օտար պատմիչները՝ հայ սատրապնե-
րը, որոնք կ'իշխէին Ծովքաց աշխարհին,
ուսկից որոշ կ'երեւի որ Բիւզանդ Տիգրիս
գետէն անդին Ծովքաց աշխարհ չի ճանչ-
նար, որովհետեւ այդ իր յիշած սատրապ-
ներու հոգերը Տիգրիս գետէն անդին չէին
անցներ. այս սատրապութիւնները ու-
թը հատ էին. Աղծնիք, Ծովք Մեծ, Ան-
գեղաուն, Անձիթ, Ծովք Ծահունեաց,
Մղուր, Դարանաղի, Եկեղեցաց⁵:

Ըստ այս թուարկումին, Մեծ Ծովք Դ.
գարուն արեւելեան գաւառ մըն էր, ընդ
մէջ Աղծնիքի - Պաթման Սուր - Անգեղ
տան - Ջերէն Սուր: Իսկ Տիգրիսէն ան-
դին՝ Միջագետք Հայոց կը կոչուէր մեր
նախնիքներէն:

Խորենացին, որուն կը վերադրուի Աշ-
խարհացոյց մը, կը յիշէ Ծովքաց աշխար-
հը, եւ անոր սահման կը զննէ Տիգրիս գե-

տը. Ծովքը՝ երկու գետերուն մէջ եղող՝
Արածանիի եւ Տիգրիսի հոլամասն էր, ո-
րուն իրական աշխարհագրական վերա-
կազմութիւնը կատարած է Սուրէն Երե-
մեան, գեղեցիկ քարտէսով մը իր «Հա-
յաստանի ըստ աշխարհացոյցի» գործին
մէջ⁶: Ահա «Աշխարհացոյց»ին խօսքերը,
«Աշխարհ Հայոց, Չորրորդ Հայք, որ է
Ծովքաց կողմն, յերի բարձր Հայոց, Մե-
տինէ քաղաքաւ սահմանի ըստ մտից, եւ
ըստ հարաւոյ՝ Միջագետքով, եւ ըստ ե-
լից՝ Տարօնով: Ունի գաւառս ութ. զԽոր-
ձայն՝ յելից հիւսիսոյ... զՀաշտէնս՝ յոր-
մէ ըզիսն աղբերք Տիգրիս գետոյ. իսկ ի
մտից Խորձայնոյ՝ է Պաղատուն գաւառ,
հանդէպ հոմանուն բերդով եւ հանդէպ
նորա ի հարաւ՝ Բալու՝ Բալախովիս գա-
ւառ. եւ ի մտից նոցա Ծովք, եւ Անձիթ
գաւառ՝ ի հարաւ, յորում Ծովք եւ Հոռէ
բերդ. եւ ի մտից նոցա Դէզիկ գաւառ...
եւ Գաւրէկ գաւառ...»⁷:

Մովսէս Խորենացի, ուրեմն, չստ-
աակ կերպով կը դժէ Ծովքի սահմանը,
եւ մասնաւորապէս հարաւ արեւելեան
սահմանը, որ, ինչպէս գիտենք՝ կը սկսի
Տիգրիս գետով. իսկ Տիգրիսի հիւսիսը
մեր Ծովքաց աշխարհն է:

Հ. Ալիշան եւս, որ դրած է Ծովքաց աշ-
խարհի սահմաններուն մասին, Տիգրիս
գետը, որ Միջագետքը կը բաժնէ Ծով-
քէն, միակ սահման կը զննէ Ծովքաց աշ-
խարհին. «Ի Խորբուրդ կուսակալութեան
Մեծին Հայոց, պարագրի աշխարհն Ծո-
վաց, որ է Դ. Հայք. եւ ունի սահման ի
հիւսիսոյ զՄնձուր եւ զՏուժիկ եւ զԿեղի,
յարեւելից՝ զԳաւառն Մշոյ եւ զՏիարպե-
րի, ի հարաւոյ՝ զնոյն Տիարպերի եւ
զՈւռհայ, յարեւմտից՝ զԵփրատ գետ Հա-

3. Պրոկոպիոս, Յաղագս պատերազմին պարսից,
հտ. Ա. տպ. Պոն, 1833, էջ 107-108:

4. Պրոկոպիոս, Յաղագս շինութեանց, հտ. Բ.
տպ. Պոն, 1838, էջ 248:

5. Բիւզանդ, Պատմ. Հայոց, տպ. Վենետիկ,
1933, էջ 40-43:

6. Տպ. Երեւան, 1963:

7. Մովս. Խորենացի, Աշխարհացոյց, տպ. Վե-
նետիկ, 1881, էջ 30:

յոց, որ ձեւէ զսահմանս Մեծաց եւ փո-
քուն Հայոց»⁸:

Հ. Ալիշան Տիգրիս գետէն անդին, Մի-
ջագետք Հայոցը կը գետեզէ, ինչ որ էր
Խորենացիի աշխարհագրութեան մէջ:

Հիւրձման իր «Հին հայոց տեղւոյ ա-
նունները» աշխատութեան մէջ⁹, կը խօսի
եւ կը ջանայ գծել Ծովքաց աշխարհին սահ-
մանները, եւ գլխաւորապէս հարաւ արե-
ւելեան սահմանը, հետեւելով Ստրաբոնի
Ծովքաց աշխարհի դժած նկարագրութեան,
եւ որ՝ ինչպէս տեսնենք՝ կը հասցնէ մին-
չեւ Մասիսոս լեռները, որ է մեր Տաւրոսը,
առանց նկատի առնելու որ Տաւրոս լեռը
չստ ճիւղաւորումներ ունի, եւ Տիգրիս՝
Տաւրոսի լեռներուն մէկ ճիւղին մէջէն է
որ կը հոսի՝ իր գէպի արեւելք ընթաց-
քին վրայ, եւ կը դժէ Տաւրոսի լեռներուն
մէջ իսկ, Միջագետքի եւ Ծովքաց աշխար-
հի սահմանը. փոքրիկ ճիւղ մը եւս Տա-
ւրոսի լեռներուն՝ Ամիգ կամ Տիարպերի-
քէն ճիւղաւորուելով կ'իջնէ Միջագետք
Հայոց. այս ճիւղը եւս ժամանակ մը սը-
խալումով Տաւրոս կամ Մասիսոս լեռներ
կոչուած է. սակայն, բուն Մասիսոս կամ
Տաւրոս լեռները Տիարպերիի հիւսիսէն
անցնելով կ'երկարին գէպի Տարօն, Մուշ
եւ Կորդուաց աշխարհը. մեր նախնիք թէ
օտար պատմիչներ այս Տաւրոսի մասին
չեն խօսիր: Այս անուշիկ ենթադրու-
թեամբ, Հիւրձման եւս, չիտթութեան
մէջ ինկած է Ծովքաց աշխարհին հարաւ
արեւմտեան սահմանը գծելուն մէջ, որ
իրեն համար կը մնայ անորոշ: Սակայն,
երբ որոշ քննութեան առնուին Տաւրոսեան
լեռներու դանաղան ճիւղաւորումները,
Տիգրիսը Ծովքաց աշխարհին սահման պի-
տի զննենք՝ առանց անորոշութեան մէջ իյ-
նալու: Ծովքաց աշխարհի Տիգրիսեան
սահմանը կը համապատասխանէ մեր
պատմութեան տուեալներուն:

3. Ծովքաց աշխարհի սահմանները՝ ըստ
պատմութեան. Ծանօթ է մեզի որ Մեծն
Տիգրան Տիգրիս գետը անցնելով՝ Հայաս-
տանի սահմանները ընդարձակեց. անոր
աշխարհակալութիւնը տեւեց 95-56 թա-
մանակները. հուսկ յաղթուելով Պոմպէոս-

սէն, Տիգրիս գետէն անդին յանձնեց Հռո-
մի, եւ քաջուեցաւ իր բնական սահման-
ներուն մէջ. իսկ Միջագետքը եղաւ հռո-
մէական նահանգ մը: Ս. Երեմեան «Հա-
յաստանի ըստ աշխարհացոյցի» հեղինա-
կը, կը գրէ, Մ. Թ. Ա. 37-ին ընդմիջտ ան-
ջատուեցաւ Մեծ Հայքէն Միջագետք, ո-
րուն խոշոր քաղաքն էր ԱՄՆԴ¹⁰. եւ հե-
տագային կոռուարնձոր եղաւ Հռոմի եւ
Պարսից միջեւ:

Այս ցոյց կու տայ թէ այդ թուականէն
սկսեալ՝ հայ իշխանութիւնը ոտք դնելիք
տեղ չունէր Միջագետքի մէջ, ուր կային
մեծ քաղաքներ եւ բերդեր, Մերոսին,
Բնաբեկ, եւ ուրիշներ՝ ըստ հեղինակին:

Իսկ 298 թուականին, 40 տարուան զա-
ւինքով, Միջագետքը բոլորովին Հռոմի
անցաւ, մինչեւ 363 թուականը. այս շրջ-
անին Աղծնիքէն մինչեւ Կորդուք նորէն
անցաւ պարսիկներու ձեռքը¹¹. եւ Մեծ
Ծովքը Աղծնիքէն բաժնող Նեմփիոս գետը
սահման եղաւ Հռոմի եւ Պարսից: Եւ ար-
դէն Դ. դարուն՝ Խորենով, Տիգրան եւ Ար-
շակ թագաւորներու օրով՝ Ծովքաց աշ-
խարհը չիւղ մեծ սատրապութիւններու
բաժնուած էր, որոնք, ինչպէս կ'ըսէ Լէօ,
կէս անկախ իշխաններ էին որ երբեմն
Հռոմի, երբեմն Պարսից կողմը կը բռն-
նէին¹²:

Դ. դարուն, ինչպէս ըսինք, Հայաստա-
նը կը բաժնուի. Մեծ Հայքի այն կտորը՝
որ ինկած էր բաժին Բիւզանդացիներուն,
կազմուած էր երկու մասերէ. հարա-
ւային մասը կը կոչուէր սատրապական
Հայաստան, իսկ հիւսիսային մասը Մեծ
Հայք: Սատրապական Հայաստանը իր
անունը առած էր այն նախարարներէն՝ ո-
րոնք անկախօրէն հոն կ'իշխէին. թիւով

8. Ալիշան, Տեղագրութիւն Հայոց Մեծաց, տպ.
Վենետիկ, 1855, էջ 42:

9. Հիւրձման, անդ:

10. Ս. Երեմեան, Հայաստանի ըստ «Աշխարհա-
ցոյց»ին, տպ. Երեւան, 1963, էջ 71:

11. Հիւրձման, անդ, էջ 72:

12. Լէօ, Պատմութիւն Հայոց, հտ. Ա. տպ. Ե-
րեւան, 1947, էջ 166:

անոնք հինգ էին. անոնց երկրամասն էր Եփրատի եւ Տիգրիսի միջեւ. անկից անդին դէպի հարաւ՝ այլեւս հայ հող դուրս չուներ չունէր: Այս սատրապութիւններու անուններն են, ինչպէս կը յիշէ Ստրաբոնը եւս իր աշխարհագրութեան մէջ, 1. Հաշտանք, 2. Ծոփք, 3. Հանձիթ, 4. Անդեղտուն, 5. Բալահովիտ: Ստրաբոնը աշխարհագրութիւնը Տիգրիսի գետէն անդին՝ կարծես՝ հայ հող չի ճանչնար. Տիգրիս Հայաստանի սահմանագետն էր: Այս սատրապները, ինչպէս կ'ըսէ Լէօ, փոքրիկ թագաւորներ էին, ունէին իրենց յատուկ զօրքը, եւ Հռոմ իրաւունք չունէր այդ կողմերը զօրք պահելու: Բիւզանդ, երբ 350ի ժամանակուան պատմութիւնը կը գրէր, կը յիշէր նաեւ այս իշխանիկներէն քանի մը հատին անունները. «Վազար՝ որ էր իշխան Անձտայ, եւ ընդ նմա զՋարեհ իշխանն՝ նահապետն Մեծի Ծոփաց, եւ զՎարազ Ծահունի՝ իշխանն Ծոփաց աշխարհին, եւ զԳնիթ իշխանն Հաշտանից գաւառին»¹³: Իսկ Տիրանի եւ Արշակի թագաւորութեան շրջանին՝ այս կողմերուն սատրապ կամ մեծ իշխան կը յիշուի Դրաստամատ. «Իսկ Դրաստամատն ներքինին... իշխան տան գաւառին եւ հաւատարիմ գանձուց Անդեղ բերդին»¹⁴:

Ինչպէս որոշ կը տեսնուի, հոս ո'չ միայն խօսք չկայ Միջագետքի մասին, այլ եւ այն սատրապներուն հոգերուն սահմանները Եփրատ գետէն Տիգրիսի գետ կ'երկարին. հետեւորաւ, այդ շրջանին հայ թագաւորներու սահմանները եւս Տիգրիսէն անդին չէին անցներ. Տիգրիսէն անդին այլեւս հռոմէական կամ պարսկական հողեր էին. հայ թագաւորները հոն դրժ չունէին:

Հիւրէման կը գրէ թէ 387ին Բալահովիտ Արշակ թագաւորին բաժինէն առնուելով՝ միացուեցաւ Ծոփաց Անձտայ Անդեղ տան եւ Մեծի Ծոփաց հետ, որոնք վերեւի հինգ սատրապութիւնները կը կազմէին¹⁵:

Այսպէս յետ ճշտելու Ծոփաց աշխարհին եւ Միջագետքի սահմանները Ն. Բ. 95 թուականէն մինչեւ Դ. դար, այժմ կու գտնուի թէ ո'ւր կը գտնուէր ԲՆԱԲԵՂ բերդը, որու տեղւոյն մասին զանազան կարծիքներ կան:

ԲՆԱԲԵՂ բերդ. անուն մը՝ որ հաղիւ երբեք կը յիշուի մեր պատմութեան մէջ: Իսկ օտար պատմիչներէն, եթէ ընդունինք որ ՊԱՆԱՊԷԼը մեր ԲՆԱԲԵՂն է, զայն կը յիշէ Գեորգ Կիպրացի. մեր պատմիչներէն՝ Բիւզանդ:

Գեորգ Կիպրացի որ ապրած է 604ի ժամանակները, գրած է հռոմէական թեմերու եւ գաւառներուն աշխարհացոյցը. երբ կը խօսի Միջագետք Հայոցի մասին, հոն յիշուած 26 բերդերու կարգին՝ կը յիշէ նաեւ $\chi\acute{\alpha}\sigma\tau\rho\omicron\nu$ Βενάβελων - Benabel castrum, որ ըստ Գեորգի է մեր Բնաբեղ բերդը, զոր կը յիշէ Բիւզանդ: Նկատի առնելու ենք որ Գեորգ Կիպրացի Պանապէլ բերդին տեղւոյն մասին որոշ ցուցմունք չունի. մինչ Բիւզանդ կ'ըսէ թէ «յերկրին Ծոփաց ի Բնաբեղ բերդին գանձքն լիայ էին»¹⁶: Ուրեմն, Բիւզանդ գտնէ որոշ կը գտնէ ո'ր գաւառին մէջ ըլլալը. իսկ թէ ո'ր քաղաքին մօտ, կամ ո'ր տեղւոյն վրայ, այդ կը մնայ հետեւցնել եւ ճշտել քննութեամբ:

Գեորգ Կիպրացիի հրատարակիչը՝ Գեղդէր, երկար պրպտումներ կատարած է, Գեորգ Կիպրացիի աշխարհագրական աշխատները ճշտելու. Գեորգ Կիպրացի Միջագետքի պարսկական, սիւրբական եւ քրիստական հոգերուն վրայ կը թուէ 26 բերդերու անուններ, որոնցմէ Գեղդէր հաղիւ կըրցած է երկու հատին իսկութիւնը ճշտել, Մարտէ եւ Բնաբեղ բերդերուն. իսկ միւս 24 բերդերը կը մնան անորոշ. Մերտինը կը ճանչնանք իբրեւ քաղաք եւ բերդ, որ Միջագետքի մէջ կը գտնուի, ա-

մէնուս ծանօթ. սակայն Պանապէլը, կը մնայ խորհրդաւոր: Գեղդէր կ'ըսէ թէ շատ թափառած է յոյն, հռոմէացի, ասորի եւ հայ պատմադիւրներու զրքերուն մէջ, գտնելու համար այս 26 բերդերուն մասին ծանօթութիւններ. բայց անգուտ, որովհետեւ կ'ըսէ թէ Գեորգ Կիպրացիի դործը դարերու ընթացքին շատ ձեռքէ ձեռք անցած է, խառնակուած եւ անունները մէկ ցանկէն միւս ցանկը փոխադրուած. «Plurima enumerat castra quorum mentionem apud graecos, syros, armenos scriptores frustra quesivi»¹⁷:

Եւ ապա կ'աւելցնէ՝ թէ այդ բերդերուն տեղերը իրարու հետ շփոթուած եւ խառնակուած են. եւ ով որ անոնց անուններու նմանաձայնութիւնէն ուղէ անոնց տեղը ճշտել՝ մեծապէս պիտի սխալի. «Accedit quod Georgius nomina tantum recenset, ita ut cum et ordo nonnumquam apud eum turbatus sit, de situ castrorum minime edoceamur; et qui nomina tantum similia inter se componit, saepe vehementer errat»¹⁸:

Գեորգ Կիպրացի իր ցանկին մէջ Մերտինի չուրջ այնպիսի անուններ կը թուէ, որոնք ո'չ մէկ աշխարհագրի քով կարելի է գտնել, եւ զրեթէ ամէնքն ալ քիւրտական եւ Միջագետքի լեռներուն վրայ գտնուող բերդերու անձանթ անուններ են, զորս չեն կըրցած գտնել այդ կողմերուն ամէնէն ծանօթ մասնագէտները:

Արդ, այս օտար բերդերուն մէջ Գեղդէր հանդիպել է հայկական անունին նմանող բերդի մը անունին, ՊԱՆԱՊԷԼ, $\chi\acute{\alpha}\sigma\tau\rho\omicron\nu$ Βενάβελων. եւ որովհետեւ անոր նմանաձայնութեամբ՝ Բիւզանդ կը յիշէ ԲՆԱԲԵՂ մեծ Ծոփաց աշխարհին մէջ բերդ մը, որ հայ թագաւորներուն գանձերու տեղը եղած է, ուրեմն՝ այդ երկու բերդերը, կ'երկարացնէ Գեղդէր, նոյնը ըլլալու են, Բնաբեղ-Պանապէլ: Իր այս կարծիքը կը հաստատէ փաստով մը. Յովհաննէս Մարտինցի Եպիսկոպոս մը եղած է, ինչպէս կը գրէ Աստեմանի, որ Մարտինի չուրջը կը յիշուի շատ մը վանքեր, եւ Ս. Ստեփան-

նոս անունով վանք մը, որ կը գտնուի Եփրատի ՊԱՆԱՊԷԼ բերդէն ոչ հեռու եւ Բիւզանդի քաղաքին մօտ: «Ioannes Mardae episcopus praeter magnum coenobiorum numerum, et S. Stephani monasterium construxit, quod est ad latus BENA-BEL et Rismil pagorum»¹⁹:

Արդ, հարց կը ծագի թէ այս Մարտինի Եպիսկոպոսին յիշած Պանապէլ բերդը նոյն է մեր Ծոփաց աշխարհի մէջ Բիւզանդի յիշած Բնաբեղ բերդին հետ: Հիւրէման եւս կասկածով կը մօտենայ այս հարցին, մանաւանդ որ՝ կ'ըսէ՝ Բիւզանդի յիշած Բնաբեղ բերդը գանձատուն էր. հայ թագաւորները բացի Բնաբեղէն՝ ունէին ուրիշ տեղեր եւս գանձատուներ, այսպէս Անդեղ բերդը՝ Ծոփաց մէջ, Անին՝ Դարանաղի մէջ, եւ Դարեւնքը՝ Կոյսի մէջ: Հետեւորաւ շատ տրամաբանական է երեւի որ հայ թագաւորները իրենց սկիւն ու գանձերը պահէին, հետուր երկրի մը բերդին մէջ, որ շարունակ պատերազմներու թատերաբեմ էր նոյն ժամանակները. ուրեմն, կասկածի տակ կը մնայ որ Յովհաննէս Մերտինցի յիշած Մերտինի մօտիկ եղող բերդը՝ Պանապէլը՝ ըլլայ մեր Ծոփաց աշխարհին Բնաբեղ բերդը:

Մանրամասնեմք մեր քննութիւնը եւ կըրակացնենք²⁰:

1. - Ինչպէս տեսնուի, Տիգրիսի գետի վրայ գտնուող Միջագետքը՝ Ծոփաց աշխարհէն, ըստ Ստրաբոնի եւ ուրիշ պատմիչներու տուեալներուն. եւ որովհետեւ Բնաբեղը դուռ հայկական բերդ մըն էր եւ հայ իշխաններու ձեռքին տակ՝ գանձատուն հայ թագաւորներու, իսկ

17. Գեորգ Կիպրացի (Կրտ. Գեղդէր), *տպ. Լիփ-սիտ*, 1890, էջ 157:

18. Անդ:

19. Assemani, B. O. II, 222, 228:

20. Համեմատէ նաեւ իբրեւ աղբիւր, Հ. Ղ. Ինձեմեմ, Ստորագրութիւն իմ Հայաստանի, *տպ. Վենետիկ*, 1822: Ա. Ա. ՊԱՆԱՊԷԼ, Հայաստանի սահմանները, *տպ. Գահրէլ*, 1950 (?): Յ. ՄԱՆԱՊԷԼ, Պատմութիւն Հայ ժողովրդի, *տպ. Երեւան*, 1957:

13. ԲԻԻԶԱՆԴ, *անդ*, էջ 40:

14. Անդ, էջ 210:

15. ՀԻԻԲԵՄԱՆ, *անդ*, էջ 72-73:

16. ԲԻԻԶԱՆԴ, *անդ*, էջ 211:

Ծանօթ են ամէնուն Հ. Ալիշանի աշխարհագրական մեծ զի աշխատութիւնները, որոնք այնպիսի ճշտութիւն մը ունին՝ որ կը զարմացնեն օտար թէ հայ աշխարհագէտներ, որ անիկա առանց տեսնելու այդ քաղաքները, բերդերը, գետերն ու լիճները, անմասն ճշտութեամբ նկարագրել է, եւ գետեղած է զանոնք՝ պատմութեան ցոյց տուած տեղերուն վրայ, այնպէս որ անոր կը դիմեն մինչեւ այսօր՝ կարծիքը առնելու որեւէ աշխարհագրական հարցի մը շուրջ:

Ս. Երեմեան եւ Հայաստանի Ատրաքի հեղինակները, մեծ զի գործ մըն է որ կատարած են, եւ մեծապէս օգտակար. անոնք մեզի տուած են Ե. զարու Հայաստանի սահմանները, եւ ամբողջ մեր աշխարհը, իր քաղաքներով, լեռներով, բերդերով եւ հարստութեամբ. Պանապէլ բերդը, արդէն այդ քարտէսի սահմաններէն դուրս է, եւ խորհրդանշական ալ յիշած է, իր «Աշխարհագրութեան մէջ», որովհետեւ Հայաստանի մասն է իր կողմեր: Ս. Երեմեան եթէ Բնաբեղ բերդը գրել է Մերտինի մօտիկ, կ'ենթադրեմ որ օտար աշխարհագիրներու գրածը կրկնած է, ինչպէս ըսինք, առանց նոյնացնելու Ծոփաց Բնաբեղին հետ:

Մենք կ'ըզրակացնենք թէ Ծոփաց աշխարհի Բնաբեղ բերդը, Գէորդ Կիպրացիի յիշած $\kappa\alpha\sigma\tau\epsilon\rho\omicron\nu$ Βαναβήλων կամ ասորիներու Պանապէլ բերդը չէ. լաւ պիտի ըլլար եթէ Ս. Երեմեանի քարտէսին վրայ գրուէր, Բնաբեղին տեղ՝ ուղղակի ասորական հնչումով՝ ՊԱՆԱՊԷԼ = BANABEL իսկ Բնաբեղ բերդը, գետեղուէր Հ. Ալիշանի հետ, Ծոփաց աշխարհի մէջ, Եփրատէն քիչ հեռու, Չնքուշի մօտիկ:

Հ. ՄԻՔԱՅԷԼ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

ՉՆՔՈՒՇՆ ՈՒ ԿԱՇԵԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

Չնքուշ¹ եւ կաշի նոյնացած անուններ էին խորհրդէր եւ Տիգրանակերտ նահանգներու բոլոր քաղաքներուն եւ գիւղերուն մէջ:

Չնքուշի եւ կաշիործ — կաշիի մեծաքանակ եւ փոքրաքանակ վաճառող, խաղախորդ, կօշկակար, եւլն. — հոմանիշ բառեր էին վերեւ յիշուած նահանգներն ընդգրկող հոյաժամախն հայ եւ օտարագիր բնակիչներուն համար:

Սփիւռքի բոլոր աշխարհամասերուն մէջ վերապրող խորհրդացիներ, Տիգրանակերտցիներ, Մալաթիացիներ, Շիրոցիներ, Կարկառցիներ, Սեւերակցիներ, Արցնի-Մատանցիներ եւ Արարկիւրցիներ, երբ այսօր ալ լսեն Չնքուշ տեղանունը, անմիջապէս կը մտաբերեն իրենց ծննդավայրի Չնքուշի կաշիործը — կաշիի վաճառականը, խաղախորդը, կօշկակարը...:

Այլ խօսքով, բոլոր Չնքուշիները, վերեւ յիշուած քաղաքներու եւ գաւառներու բնակչութեան համար, կաշիործներ են, կաշիի գործով զբաղուողներ:

Վերոյիշեալ վայրերու հայ բնակիչները յօրինած են նաեւ ժողովրդական-երգի-ծական ասացումք մը՝ Չնքուշը եւ չնքուշիներն ընտրուող եւ, Չնքուշիները հեղինելու նպատակով, կամ ընկերական շրջանակներու մէջ գուարճութեան համար, իրենց ծանօթ կամ անծանօթ Չնքուշիներու ներկայութեան, կը գործածէին այդ ասացումքը — «Կարմիր կովուն կարմիր կաշին հա՛ քաշէ հա՛ քաշէ»:

Այս ասացումքը, զոր կ'արտասանուէր Չնքուշիական բարբառով, կը ընդհատուէր իւր չնքուշիներէն, կը զայրացնէր այնքան չնքուշիները, որոնք կը լսէին բոլոր Չնքուշիները, որոնք կը լսէին զայն, մանաւանդ անծանօթի մը շրջանէն:

Պարսկ տեղը չէր, ուրեմն, որ անցեալ տարի զաշտահանդէսի մը մէջ, Արարկիւրցի բարեկամներէս մին, Ֆիլատելֆիարքնակ Առաքել Գաղանճեան, երբ լսեց թէ Չնքուշի պատմագիրքը խմբագրելու աշխատանքին հմ լծուած, ըսաւ կէս-հեղինականօրէն — «Պարսկ Գէորգեան, կաշիի պատմութիւնը պիտի գրէք»:

Չնքուշի բարեկամս, եւ ո՛չ ալ վերադարձեցայ, որովհետեւ գիտէի թէ ան Արարկիւրի մէջ՝ Չնքուշը կաշի կը հասկնար եւ Չնքուշի կաշիործ կը ճանչնար:

Փաստօրէն, մինչեւ 1915ի Մեծ Եղեռնը, կաշիործութեան, մասնաւորապէս խաղախորդութեան (տապաղ) գործը Տիգրանակերտ եւ խորհրդ նահանգներու բոլոր քաղաքներուն մէջ հարիւր առ հարիւր, կամ առնուազն 90 տոկոսով, չնքուշիներու ձեռքն էր (այդ քաղաքներու բնակիչները «չնքուշի» կը ճանչնային, եւ այդպէս ալ կը յորջորջէին, ո՛չ միայն Չնքուշի մէջ ծնածները, այլ նաեւ անոնք, որոնց պապերն ու պապերուն պապերը Չնքուշ էին ծնած):

Չնքուշի մէջ մշակուած կաշիները իրենց առաջնութիւնը եւ գերազանցութիւնը:

1. Չնքուշ գիւղաքաղաք մըն է խորհրդ եւ Տիգրանակերտ քաղաքներու միջեւ, առաջինէն երկու եւ երկրորդէն երեք օրուան հեռաւորութեամբ հետիտան եւ զրատի ճամբորդութիւնով: Ունէր 1200 հայ եւ 300 թուրք տուն բրնակչութիւն՝ մինչեւ 1915ի Մեծ Եղեռնը, երբ տեղւոյն հայութիւնը ամբողջութեամբ ընաշնջուեցաւ:
2. Ի. Գաբուն, երբ ուսումը ընդհանրացած էր Չնքուշի մէջ, այս հնչումները գրեթէ բոլորովին չբացան, բայց հին սերունդի բարբառին մէջ տիրական էին անոնք: